ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

26.11.2014թ.
233-ի 2

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Մեզ է դիմել "Էկոլոգիական իրավունք" բնապահպանական հասարակական կազմակերպությունը եւ խնդրել է իրեն օգնել տեղեկատվություն ստանալու հարցում: 2014թ.-ի օգոստոսի 4 թվագրված գրությամբ ՀԿ-ն դիմել է Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Երբվանի՞ց է Խանջյան 19 հասցեում գրանցված "Թեղուտ" ՓԲ ընկերությունը հաշվառվել որպես գույքահարկ վճարող,
2. Գույքահարկով հարկվող ինչպիսի՞ փոխադրամիջոցներ են հաշվառված "Թեղուտ" ՓԲ ընկերության հաշվեկշռում,
3. Որքա՞ն գույքահարկ է վճարել "Թեղուտ" ՓԲ ընկերությունը Երևան քաղաքի բյուջեին իր հաշվեկշռում գտնվող փոխադրամիջոցների համար՝ յուրաքանչյուր տարվա դիմաց:

Ի պատասխան՝ 06.08.2014թ. թվագրված գրությամբ քաղաքապետարանը մերժել է տրամադրել խնդրվող տեղեկությունները՝ հղում անելով "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի (այսուհետ նաեւ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին եւ համարելով, որ հարցմամբ խնդրվել է "հարկային գաղտնիք" պարունակող տեղեկություն:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է, որ "Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝ 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք…": **Այսպես, Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որին հղում է արված քաղաքապետարանի պատասխան գրությամբ, չի սահմանում "հարկային գաղտնիք"-ը՝ որպես տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակման հիմք:**

Բացի այդ, "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ "Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկետվություն տնօրինողն այդ մասին 5-

օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաեւ դրա բողոքարկման կարգը:” **Ուստի, քաղաքապետարանի պատասխանն այն մասին, որ “Կատարվող ցանկացած դրամական ծախսի, այդ թվում հարկային պարտավորությունների գաղտնիությունը պաշտպանվում է ՀՀ օրենսդրությամբ” պատշաճ մերժում չէ, չի բխում “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջից, բացակայում է մերժման այն հիմքի (օրենքի համապատասխան այն նորմի) նշումը, ըստ որի պահանջված տեղեկությունը համարվում է հարկային գաղտնիք:**

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝ “Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝ … 2) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության … բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության … բնագավառում տիրող իրական վիճակը”: **“Էկոլոգիական իրավունք” բնապահպանական հասարակական կազմակերպության հարցումը վերաբերում է բնապահպանությանը եւ շրջակա միջավայրին, այդ ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպությանը, որի գործողությունները, այդ թվում՝ հարաբերությունները պետության հետ եւ պարտավորությունների (տվյալ դեպքում՝ հարկային) կատարումը պետության եւ հասարակության հանդեպ ցույց են տալիս շրջակա միջավայրի եւ բնության վրա ազդեցության ունեցող կազմակերպության կարգավիճակը, գործունեության օրինականությունը, հետեւաբար նաեւ շրջակա միջավայրի եւ բնության վրա ազդեցության իրավաչափությունը: Ուստի, անգամ եթե “Էկոլոգիական իրավունք” բնապահպանական հասարակական կազմակերպության հարցմամբ խնդրված տեղեկությունները համարվում են գաղտնիք, ապա “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն այդ տեղեկությունները պետք է տրամադրվեն:** Նման դիրքորոշում արտահայտել է նաեւ ՀՀ վարչական դատարանը թիվ 4141/05/11 վարչական գործով, ուստի հարկ է հաշվի առնել նաեւ դատարանի մեկնաբանությունը բնապահպանության ոլորտին վերաբերող տեղեկատվության սահմանափակման հնարավոր դեպքում:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ տեղեկությունները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան